ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2018 թվականի մարտի 14-ի N 4 - Լ

Լսելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում մագիստրոսական պրակտիկայի կազմակերպման մասին պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանի հաղորդումը՝

Գիտական խորհուրդը որոշում է՝

1. Մագիստրոսական պրակտիկայի կազմակերպման մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. **Հանձնարարել**.

ա) մագիստրոսական կրթական ծրագրերով սովորողների մասնագիտական պրակտիկաները կազմակերպող ամբիոնների վարիչներին՝ մինչև սույն թվականի մայիսի 15-ը վերանայել 2018-2019 ուսումնական տարում մագիստրոսական պրակտիկայի առարկայական նկարագրերը,

բ) ֆակուլտետների դեկաններին՝ մինչև սույն թվականի ապրիլի 15-ը ներկայացնել իրենց ֆակուլտետներին վերապահված մասնագիտությունների 2018-2019 ուսումնական տարում մագիստրոսական պրակտիկայի ամփոփիչ սեմինարների կազմակերպման ծրագրերը և ժամանակացույցը:

գ) համալսարանի պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանին և իրավաբանական կենտրոնի ղեկավար Արմեն Ֆերոյանին՝ մինչև 2018-2019 ուսումնական տարվա սկիզբը ապահովել մագիստրոսական կրթական ծրագրերով սովորողների համար պրակտիկայի կազմակերպման հիմնարկների հետ համապատասխան պայմանագրերի կնքումը,

դ) ֆակուլտետների գիտության և միջազգային համագործակցության գծով դեկանների տեղակալներին՝ իրականացնել մագիստրոսական պրակտիկայի կազմակերպման գործընթացի պատշաճ համակարգում և հսկողություն:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ